ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 5605-Ա « 17 » նոյեմբերի 2026թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆՆ ՈՒԶԲԵԿՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՅՐԱՔԱՂԱՔ ՏԱՇՔԵՆԴ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով աշխատանքային օրենսգրքի 209-րդ հոդվածով և հիմք ընդունելով աշխատակազմի առողջապահության վարչության պետ Դ. Կարապետյանի 16.11.2026 թվականի Ն/76839-26 գրությունը, Ուզբեկստանի Հանրապետության զբոսաշրջության կոմիտեի նախագահի տեղակալի կողմից ստացված հրավերը՝ Առողջապահական զբոսաշրջության կոնֆերանսին մասնակցելու նպատակով.

1. Երևանի քաղաքապետարանի պատվիրակությանը՝ 2026 թվականի նոյեմբերի 25-ից 27-ը ներառյալ գործուղել Ուզբեկստանի Հանրապետության մայրաքաղաք Տաշքենդ՝ հետևյալ կազմով.

Դավիթ Կարապետյան	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի առողջապահության վարչության պետ
Հովհաննես Զոհրաբյան	«Սուրբ Աստվածամայր» բժշկական կենտրոն փակ բաժնետիրական ընկերության տնօրեն

2. Ընդունել ի գիտություն, որ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի առողջապահության վարչության պետ Դավիթ Կարապետյանի գործուղման հետ կապված բոլոր ծախսերն իրականացվում են Երևան քաղաքի 2026 թվականի բյուջեի միջոցների հաշվին, իսկ «Սուրբ Աստվածամայր» բժշկական կենտրոն փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Հովհաննես Զոհրաբյանի գործուղման հետ կապված բոլոր ծախսերն իրականացվում են «Սուրբ Աստվածամայր» բժշկական կենտրոն փակ բաժնետիրական ընկերության 2026 թվականի բյուջեի միջոցների հաշվին:

3. Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի առողջապահության վարչության պետ Դավիթ Կարապետյանի բացակայության ընթացքում առողջապահության վարչության պետի պարտականությունների կատարումը վերապահել նույն վարչության պետի տեղակալ՝ Անահիտ Չարխիֆալաքյանին:

4. «Սուրբ Աստվածամայր» բժշկական կենտրոն փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Հովհաննես Զոհրաբյանի բացակայության ընթացքում տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել տնօրենի բուժական գծով տեղակալ Սեյրան Հովհաննիսյանին:

5.Գործուղումից վերադառնալուց հետո, 3 աշխատանքային օրվա ընթացքում, փաստացի կատարված ծախսերի հաշվետվությունը և դրանք հավաստող փաստաթղթերը ներկայացնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչություն:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ